ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ - 60

ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Դ. Ա. ԴԱԼՈՅԱՆ

1920 թ. նոյեմբերի 29-ը սկիզբ դրեց հայ ժողովրդի ազգային ու սոցիալական վերածննդին։ Դեռևս XIX դարի առաջին երեսնամյակին ընդգրկվելով Ռուսական կայսրության կազմում՝ մեր ժողովրդի արևելահայ հատվածը իր բախտը մեկընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի հետ, որի հզոր հովանավորությունը հնարավորություն ընձեռեց հայ ժողովրդի հետագա համախմբման և նրա պետականության վերականգնման համար։ Հայ ազգային-ազատագրական պայքարը միաձուլվեց ռուսական հեղափոխական պայքարին, որի հաղթանակը վճռորոշ նշանակություն ունեցավ նաև հայ ժողովրդի ճակատագրում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, հանդիսանալով XX դարի ամենակարևոր իրադարձությունը, նշանավորեց շրջադարձ համայն մարդկության պատմության մեջ, հիմք դրեց ցարիզմի կողմից ճնշվող ռուսական նախկին կայսրության բոլոր ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրմանը։

Արևելահայության ազատագրական շարժումները XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ծավալվում էին ցարիզմի հակաժողովրդական սոցիալական և ազգային քաղաքականության սաստկացման և բանվորական հեղափոխական շարժման վերելքի առնչությամբ։ Ծայրահեղ վատթար վիճակի մեջ էր գտնվում արևմտահայությունը, որի նկատմամբ թուրքական կառավարող շրջանները տասնյակ տարիներ կանխամտածված ցեղասպանության քաղաքականություն էին կիրառում[1]։ Արևմտահայերի այդ ծանր վիճակը նրանց մղում էր ազատագրական պայքարի թուրքական բարբարոսների բռնակալական դարավոր ծանր լծի դեմ և նպատակ էր հետապնդում միավորվել արևելահայության հետ և վերականգնել ազգային պետականությունը՝ Ռուսաստանի հովանավորության ներքո։ Այդ պայքարը կարեկցանք և բուռն պաշտպանություն էր գտնում արևելահայության մեջ։

Ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի դեմ հառնած հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները իրենց էությամբ ազգային-բուրժուական շարժումներ էին և ունեին առաջադիմական բնույթ։ Սակայն տարբեր դարաշրջաններում այդ շարժմանը մասնակից ուժերի նկրտումները տարբեր էին։ Իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջա-

---

1 *Տե՛ս* Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсесяна, Ереван, 1966.

նում ազգային բուրժուազիան հանդես էր գալիս հեղափոխական բանվորական շարժման դեմ, ձգտելով ազգային-ազատագրական շարժումներն ուղղել դեպի նեղ ազգայնական պայքարի հունը։

Բուրժուաազգայնական դաղափարախոսները փորձում են իրերի դրությունը ներկայացնել այնպես, որ իրենց գաղափարներն են սնունդ տվել ազգային-ազատագրական շարժումներին։ Այդ սին մեկնակերպին հավատացողները խոր թյուրիմացության մեջ են։ «Ազգային շարժումները,— ասել է Վ. Ի. Լենինը,— առաջին անգամ չէ, որ ծագում են Ռուսաստանում և հատուկ են ոչ միայն նրան։ Ամբողջ աշխարհում ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակի շրջանը կապված է ազգային շարժումների հետ։ Այդ շարժումների տնտեսական հիմքն այն է, որ ապրանքային արտադրության կատարյալ հաղթանակի համար անհրաժեշտ է, որ բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչությունը խոսում է միևնույն լեզվով, վերացնելով այդ լեզվի զարգացման և գրականության մեջ այն ամրացնելու դեմ եղած բոլոր արգելքները... Արդի կապիտալիզմի այդ պահանջներին ամենից ավելի բավարարող ազգային պետությունների գոյացումը այս պատճառով ամեն մի ազգային շարժման տենդենցն (ձգտումն) է»[2]։

Ազգային շարժումները Հայաստանում, հայ ազգային պետություն ստեղծելու ձգտումը պատմական այդ ընդհանուր պրոցեսում բացառություն չէին, այլ հանդիսանում էին Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման դարաշրջանի օբյեկտիվ պահանջների արտահայտություն և ոչ թե քաղաքական այս կամ այն կուսակցության գործունեության արդյունք։

Հայ իրականության մեջ ևս ազգային քաղաքական կուսակցությունները ձևավորվեցին ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակի ավարտի և իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների սկսվող դարաշրջանում, երբ բացահայտորեն փոխվել էր դասակարգային ուժերի փոխհարաբերությունը, երբ պատմական պրոցեսի օբյեկտիվ բովանդակությունը, «հնարավոր պրոգրեսի գլխավոր զսպանակը» (Վ. Ի. Լենին) կազմում էր հեղափոխական բանվորական շարժումը։ Բուրժուազիան ազգային-ազատագրական շարժման մեջ արդեն վեր էր ածվել հետադիմական, այդ շարժմանը խոչընդոտող ուժի և ձգտում էր ազգային շարժումների գաղափարախոսությունը հակադրել բանվորական հեղափոխական շարժման գաղափարախոսությանը։ Մինչդեռ 90-ական թվականների կեսերից Ռուսաստանում բանվորական շարժումը արդեն հանդես էր եկել իր որոշակի քաղաքական ու սոցիալական իդեալներով, որոնք պայմանավորում էին նաև ազգային-ազատագրական շարժումների հնարավոր հաղթանակի հեռանկարները։

Այսուհանդերձ բանվորական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների համար որպես գլխավոր հակառակորդ մնում էր ցարական ինքնակալությունը։ Այդ պատճառով էլ նրա դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումներին շարունակում էր մասնակցել նաև հայ ազգային բուրժուազիան, որը հանդես էր գալիս համազգային շահերի պաշտպանության դրոշով, իր քաղաքականության անկյունաքարում դնելով «Թուրքահայաստանի» ազատագրման հարցը, որն իրոք համազգային նշանա-

---

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 492—493։

կություն ուներ և հայ հասարակության ոչ մի խավ անտարբեր չէր կարող վերաբերվել այդ հարցին։

Հայ իրականության մեջ դասակարգային հակամարտությունը 1880—90-ական թթ. դեռևս բացահայտ սուր բնույթ չէր կրում։ Դա մի կողմից դանդաղեցնում էր կազմավորվող ազգային պրոլետարիատի ինքնագիտակցության հասունացման պրոցեսը և բարդացնում պրոլետարական գաղափարախոսության զարգացումը, իսկ մյուս կողմից՝ պարարտ հող էր ստեղծում համազգային շահերի դրոշով քողարկվող ազգային բուրժուազիայի գաղափարների պրոպագանդման համար։ Երկրորդական գործոն չէր նաև այն հանգամանքը, որ հայ իրականության մեջ սոցիալ-դեմոկրատիան որպես քաղաքական մտքի հոսանք կյանքի ասպարեզ իջավ այն ժամանակ, երբ արդեն ավելի քան քսան տարի իրենց ճյուղերն էին արձակել բուրժուազգայնական կուսակցությունները։

Մարքսիզմ-լենինիզմի թափանցումը Անդրկովկաս, լենինյան-իսկրայական կազմակերպությունների ստեղծումը նշանավորեցին խոշորագույն իրաղարձություն երկրամասի հասարակական-քաղաքական կյանքում. սկիզբ դրվեց Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի որակապես նոր էտապին՝ բանվորական շարժման հետ ազգային-ազատագրական շարժումների միավորման էտապին։ Պատմականորեն դա օբյեկտիվ պրոցես էր, որովհետև բանվորական հեղափոխական շարժման մեջ, ինչպես ժամանակին ճիշտ ընդգծել է Ֆ. Էնգելսը, իսկական ազգային գաղափարները միաժամանակ իսկական ինտերնացիոնալ գաղափարներ են[3]։

Ի տարբերություն ցարիզմի կողմից ճնշված մյուս ժողովուրդների, հայ ազգային-ազատագրական շարժումը ուներ իր ուրույն առանձնահատկությունը։ Այն սերտորեն կապված էր Թուրքիայի դժնդակ լծի տակ հեծող արևմտահայերի ազատագրական շարժման հետ։ Այս հանգամանքը խիստ բարդություններ էր ստեղծում հայ ժողովրդի երկու հատվածների ազատագրական շարժման հնարավոր հաղթանակի ուղիների կանխորոշման գործում։ Հայ ժողովրդի երկու հատվածների ազատագրական շարժումները, սեփական պետականություն ստեղծելու նրա ձգտումը բարդ, խիստ բարդ հանգույց էր, որտեղ շոշափվում էին ոչ միայն Թուրքիայի և Ռուսաստանի, այլև եվրոպական պետությունների շահերը։ Հայկական հարցի նկատմամբ նրանց միջև եղած հակասությունները ազատ արձակեցին թուրքական կառավարության ձեռքերը։ Արևմտահայերի գենոցիդի վաղուց ի վեր կազմած պլանները երիտթուրքերը հնարավորություն ունեցան իրագործել առաջին աշխարհամարտի տարիներին։

Արևելահայերի ազատագրական շարժումները ևս անխուսափելիորեն դատապարտված կլինեին պարտության, եթե ռուս ժողովրդի, նրա հեղափոխական բանվոր դասակարգի ազատագրական պայքարը չհանգեցներ ցարիզմի տապալմանը և երկրում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակին։

Դեռևս XX դարի արշալույսին Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունները, որոնց ստեղծման գործում երկրորդական դեր չեն կատարել լենինյան գվարդիայի հայ գործիչները, հաղթահարելով գյուղա-

---

3 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 33, էջ 374։

ցիական դեմոկրատիայի ռեֆորմիստական լիբերալ մտքի և բուրժուական նացիոնալիզմի դիմադրությունը, կարողացան ինքնակալության դեմ ճնշված ժողովուրդների մղած ազատագրական պայքարին հաղորդել ինտերնացիոնալ բնույթ։ Ռուսական ցարիզմը վիթխարի ուժ էր ներկայացնում և նրան միայնակ հաղթելը պարզապես անհնար էր։

Առաջին ռուսական հեղափոխությունը ցնցեց ամբողջ Ռուսաստանը և բյուրեղացրեց դասակարգային հակասությունները։ Նոր պայմաններում ազգայնական կուսակցությունները ճարպկորեն սկսեցին քողարկվել սոցիալիստական ֆրազներով՝ աշխատավորական մասսաներին իրենցից չվանելու նպատակով։ Սակայն իրենց էությամբ նրանք մնացին նույնը։

Հեղափոխության ալիքը աստիճանաբար նեղում էր անդրկովկասյան իրականության երկնած բազում ոչ պրոլետարական կուսակցություններին։ Այդ պատճառով էլ ազգային բուրժուազիան, որը վերերոտ ընդդիմադրությունից անցել էր ցարիզմի հետ բացահայտ դաշինքի, իր դասակարգային շահերի պաշտպանությունը տեսնում էր ինքնակալության հիմքերի անսասանության մեջ։ Այս հանգամանքն էլ պայմանավորեց նրա վերաբերմունքը ցարիզմի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Այսպիսի պայմաններում ազգային հարցի ճիշտ դրումը սկզբունքային նշանակություն էր ստացել սոցիալիստական հեղափոխության ճակատագրի համար։ Լենինը այս շրջանում գրած իր բազմաթիվ աշխատություններում անց էր կացնում այն գլխավոր միտքը, որ միայն ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը կարող է վերացնել ճնշող ու ճնշվող ազգությունների պրոլետարների միջև առկա անվստահությունը և հասցնել ինտերնացիոնալ պայքարի՝ հանուն սոցիալիստական հեղափոխության։

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հետևանքով տապալվեց ցարիզմը։ Իշխանությունը, հայտնի պատճառներով, անցավ բուրժուական ժամանակավոր կառավարության ձեռքը, որը չլուծեց ժողովրդին հուզող կենսական և ոչ մի հարց։ Բանվորական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները, այդ պատճառով, բուռն վերելք ապրեցին։ Աշխուժացավ նաև պետական ինքնուրույնության ձգտող ազգային բուրժուազիան։

Ստեղծված բարդ հանգույցը լուծեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որն ուղի հարթեց ցարական կայսրության ճնշված բոլոր ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրման համար։

Անդրկովկասը, սակայն, որտեղ առկա էր հեղափոխական իրադրությունը. ներքին և արտաքին հակահեղափոխության ջանքերի հետևանքով վերածվեց ռուսական հակահեղափոխությանը միջազգային իմպերիալիզմի հետ կապող օղակներից մեկի։ Ստ. Շահումյանի գլխավորությամբ սովետական իշխանություն հռչակած հերոսական Բաքուն մնաց որպես կղզի Անդրկովկասի ազգայնական հակահեղափոխության ծովում, որի պատճառով էլ պարտվեց։ Զլիներ իմպերիալիստական երկու բլոկների, հատկապես ԱՄՆ-ի և Անգլիայի միջամտությունը Անդրկովկասի ներքին գործերին, նրանց՝ սկզբում քողարկված և ապա բացահայտ դրված ինտերվենցիան, որի համար պայման էր հանդիսանում թշնամական օղակով շրջափակված Անդրկովկասի աշխարհագրական դիրքը, բուրժուաազգայնական կուսակցությունները չէին կարող դավթել իշխանությունը։

Հակառակ բուրժուական պատմագրության պնդումների, Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները չդադարեցին։ Այդ շարժումները, որոնք մինչ այդ ուղղված էին ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի և ինքնակալության դեմ, ցարիզմի տապալումից հետո ոչ թե դադարեցին, այլ փոխեցին իրենց բնույթը։ Այդ շարժումներն այժմ կրում էին սոցիալիստական շարժման բնույթ, միաձուլվել էին սովետական իշխանության համար մղվող ընդհանուր պայքարին և իրենց սրությամբ ուղղվել օտարերկրյա իմպերիալիստների և ազգայնական հակահեղափոխության դեմ։

Այս էտապում ազգային-ազատագրական շարժման դրոշը իր ձեռքն է վերցնում բարձրացող բանվոր դասակարգը, իր հետևից տանելով գյուղացիական աշխատավորական լայն զանգվածներին։ Դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ այդ շարժումը միաձուլվեց պրոլետարական հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակի համար մղվող ընդհանուր պայքարին։

Մեր ժողովրդին հուզող հանգուցային պրոբլեմներից մեկը Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցն է եղել։ Թե ինչ դիրքորոշում է ունեցել Վ. Ի. Լենինը, սովետական նորաստեղծ կառավարությունն այդ հարցի նկատմամբ՝ հայտնի է. այն իր արտահայտությունն է գտել Վ. Ի. Լենինի ստորագրած «Թուրքահայաստանի» մասին ՌՍՖՍՀ ժողկոմխորհրդի 1917 թ. դեկտեմբերի 29-ի հանրահայտ դեկրետում, որով նա պաշտպանում էր «Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախությունը»։

Այդ իրավունքի կենսագործումը, ինչպես ընդգծվում էր դեկրետում, հնարավոր էր միայն մի շարք նախնական բացարձակապես անհրաժեշտ երաշխիքների պայմաններում։ Ժողկոմխորհուրդը ամենից առաջ անհրաժեշտ էր համարում «զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունը ապահովելու նպատակով»։ Երկրի աշխարհագրական սահմանները որոշվելու էին հայ ժողովրդի՝ դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և այլ) օկրուգների դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի Արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստ. Շահումյանի հետ միասին[4]։

Այդ դեկրետի իրագործումը հնարավորություն կոնձեռեր բռնագաղթի ենթարկված հայ ժողովրդի տարաբախտ բեկորներին վերադառնալու իրենց հայրենի օջախը և թուրքական լծից անկախ պետականություն ստեղծելու։ Այն միաժամանակ առաջին քայլը կհանդիսանար պատմական դառն ճակատագրի հետևանքով իրարից բաժանված հայ ժողովրդի երկու հատվածների միավորման համար։ Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարը (հունվար, 1918 թ.) միաձայն հաստատեց այդ դեկրետը, ազգային ճնշման իմպերիալիստական քաղաքականությանը հակադրելով ճնշված ժողովուրդների լիակատար ազատագրման քաղաքականությունը։ Սակայն դերմանա-թուրքական իմպերիալիստների բացահայտ ագրեսիան, Անդրկովկաս-

---

[4] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 156—157։

յան կոմիսարիատի և նրան փոխարինած Սեյմի դավաճանությունը, Անտանտի իմպերիալիստների «չմիջամտելու» քաղաքականությունը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում գտնվող ռուսական բանակի հակահեղափոխական հրամանատարության գրված դիրքը անհնար դարձրին այդ դեկրետի իրագործումը։ «Թուրքահայաստանը» զրկվեց ազատ ինքնորոշման հնարավորությունից, իսկ թուրքական բանդաները, խախտելով Բրեստի հաշտությունը, ներխուժեցին Անդրկովկաս։

«Գերմանիային և Թուրքիային, որպես աջակից պետության, հնարավոր է առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև Անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասը անկախ է»[5],— այսպես բնութագրեց Վ. Ի. Լենինը Անդրկովկասյան Սեյմի դավաճանական և գերմանա-թուրքական բլոկի ագրեսիվ քաղաքականությունը։ Սովետական Ռուսաստանը վճռականապես հանդես եկավ հայկական տերիտորիաները անեքսիայի ենթարկելու դեմ և չճանաչեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու անօրինական ակտը։

Անդրկովկասյան հակահեղափոխության անմիասեռ բլոկը արտաքին ճնշման և ներքին հակասությունների խիստ սրման հետևանքով շուտով փլուզվեց և Սեյմի փլատակների վրա ծնվեցին Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի բուրժուական «անկախ» հանրապետությունները, որոնք նոր չարիքների աղբյուր հանդիսացան երկրամասի ժողովուրդների համար։ Միջազգային իմպերիալիզմը ոչ անհիմն կերպով մեծ հույսեր էր կապում իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված բուրժուական հանրապետությունների անջատ և թուրքերի ագրեսիվ գործողությունների հետ, որոնք կոչված էին ջլատելու երկրամասի բազմազգ պրոլետարիատի միասնությունը և վերացնելու իմպերիալիզմի գաղութային քաղաքականությանը դիմադրություն ցուցց տվող այդ գործոնը։

Նոր վայրագությունների մղումով Անդրկովկաս ներխուժած թուրքերը 1918 թ. գարնանը սրի քաշեցին ավելի քան 70 հազար հայերի, գերեվարելով և Թուրքիայի խորքերը քշելով ևս հարյուրավոր և հազարավոր հայերի[6]։ Նշավակելով թուրքական բարբարոսների այս նոր ավանտյուրան, սովետական կառավարությունը իր 1918 թ. ապրիլի 18-ի բողոքի նոտայում ընդգծում էր, որ «թուրքական զորքերի և բրդերի առաջխաղացումը Կովկասյան ճակատում ուղեկցվում է հայ ժողովրդի մասսայական բնաջնջմամբ։ Խաղաղ բնակչությունը, կանայք և երեխաները կոտորվում են հազարներով, նրանց գույքը թալանվում և հրկիզվում է... Այն, ինչ կատարվում է այս շրջաններում, վկայում է, որ տասնյակ տարիներ կիրառվող հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ»[7]։

Պատերազմում գերմանա-թուրքական բլոկի պարտությունից հետո Անտանտի իմպերիալիստները անմիջապես օկուպացիայի ենթարկեցին երկրամասը, նպատակ հետապնդելով վերջնականապես այն կտրել Սովետական

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 462։
6 Х. Р. Юсупов, Стамбул, М., 1970, էջ 116։
7 «Документы внешней политики СССР», т. I, էջ 240—241։

Ռուսաստանից և հաստատել իրենց գաղութային տիրապետությունը, «ստեղծել մի նոր Հնդկաստան կամ Եգիպտոս», ինչպես այդ մասին ցինիկորեն գրում էր անգլիական «Ֆինանշլ Նյուս» թերթը։ Դա Անդրկովկասի նկատմամբ արևմտյան իմպերիալիստների ամբողջ XIX դարում վարած քաղաքականության շարունակությունն էր՝ նոր պայմաններում։ Այդ քաղաքականությանը զուտ հակասովետական երանգ հաղորդելով, նպատակ էր դրվում դրա իրականացմանը ծառայեցնել ինչպես երկրամասի ազգայնական հակահեղափոխությանը, նույնպես և Կովկասում Սովետական Ռուսաստանի դեմ պայքարը շարունակող սպիտակգվարդիական բանդաները։

Այդ նպատակին էր ծառայում նաև հայկական մանդատը վերցնելու Վիլսոնի պլանը, որն իր վարդագույն շղարշով շատ հայերի է խաբել։ Պատճառը՝ պատմական փաստերին անքննադատ վերաբերվելն է։ Եթե հիշենք, թե ինչ դիրք դրավեց այն նույն Վիլսոնը Սովետական Ռուսաստանի ժողկոմխորհրդի՝ «Թուրքահայաստանի» մասին դեկրետի նկատմամբ, եթե հիշենք, թե ինչպիսի առատ ֆինանսական ու ռազմական օգնություն կազմակերպեց նա անդրկովկասյան հակահեղափոխությանը՝ կովկասյան ճակատի ռուս հեղափոխական զինվորների զինաթափման ու ոչնչացման, երկրամասում սովետական իշխանության տապալման համար, պարզ կդառնա Հայաստանի և հայ ժողովրդի համար Վիլսոնի «թափած» արցունքների գինը։

Վիլսոնը, ինչպես և նրա քաղաքական պարտնյորները սկսեցին «հոգալ» հայերի մասին միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր հայերին ու Հայաստանն օգտագործել Մերձավոր ու Միջին Արևելքում իրենց դիրքերն ամրապնդելու, Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու և այն գաղութացնելու համար։ Եվ երբ հայկական մանդատի հարցը քննարկվում էր Փարիզի կոնֆերանսում, Հարոլդ Նիկոլսոնը, որին հանձնարարված էր կազմել բանաձևը, նկատելով դաշնակից կառավարությունների փարիսեցիական խաղը, իր օրագրում նկատում է, որ այդ կառավարությունների «փորձառու գործիչները» «ընդունակ չեն ամաչելու անբարոյական արարքներից, եթե դրանք նույնիսկ բոլորովին էլ անհրաժեշտություն չեն հանդիսանում»[8]։

Անդրկովկասում իրենց սեփական շահերն էին հետապնդում նաև անգլիական իմպերիալիստները։ «Պատերազմը,— հայտարարեց Քերզոնը 1918 թ. դեկտեմբերի 2-ին,— ցույց տվեց, որ Անդրկովկասը կարևոր նշանակություն ունի Բրիտանական կայսրության շահերի և, մասնավորապես Հնդկաստանի համար»[9]։ Էլ ինչ Հայաստան և հայկական հարց։ Իսկ հայկական շրջանները միամտաբար հավատում էին, թե անգլիացիները Անդրկովկաս են մտել հայերին Թուրքերից պաշտպանելու համար։

Վերջերս մեր արխիվներից մեկում հանդիպեցինք այդ իրողությունը հավաստող մի փաստաթղթի։ Դա 1918 թ. դեկտեմբերին անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարությանը հասցեագրված Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախագահ Հովհաննես Թումանյանի դիմումն էր։ «Ամբողջ Թուրքահայաստանը և Կովկասյան Հայաստանի մեծ մասը վեր են ածվել անապատի,— ասվում էր այնտեղ։—Այրված են քաղաքներն ու գյուղերը, թալանի է մատնված բոլոր այն շրջանների

[8] Г. Никольсон. Как делился мир в 1919 году. М., 1945, էջ 259։
[9] R. Ullman, Anglo-Soviet Relations 1917—1921, vol. II, London, 1968, էջ 66—68.

հայերի ունեցվածքը, որտեղ ոտք են դրել թուրքերը», այդ շրջանները «ավերածությունների ու մահվան ողբալի պատկեր են ներկայացնում»։ Դիմումում սարսուռազդու մանրամասնություններով Հովհ. Թումանյանը շարադրում է այն գազանությունները, որ գործադրել էին թուրք բարբարոսները հայ շինականների նկատմամբ և հայ ժողովրդի անունից խնդրում դաշնակիցներին «անմիջապես ազատել մեր հայրենիքը օսմանյան կառավարության զորքերից...»։

Այդ խնդրանքը, հավատով ընդգծում էր Թումանյանը, «բխում է արդարության և կուլտուրայի բուն հասկացությունից» և հայ ժողովրդի «լրիվ իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունից»[10]։

Եվ ի՞նչ իմանար այդ մեծ հումանիստը, որ թուրքական զորքերը շարունակում էին ոտնակոխ անել հայկական հողը այդ նույն Անգլիայի և նրա դաշնակիցների լռելյայն համաձայնությամբ։ Նրան հայտնի չէր, որ Մուդրոսում ձեռք բերած գաղտնի համաձայնությամբ Թուրքիան պարտավորվել էր իր զորքերը պահել Հայաստանի օկուպացված տերիտորիաներում, մինչև նրանց կփոխարինեին անգլիական զորքերը։ Հովհ. Թումանյանի և նրա պատրանքները կիսողների հիասթափությունը մեծ եղավ, երբ այդ դիմումը գեներալ Թոմսոնը պարզապես դեն շպրտեց որպես թղթի կտոր։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, քանի որ Անգլիան իրոք միայն իր սեփական շահերն էր հետապնդում։

Հիշենք նաև, թե ինչ իրաղ խաղացին Ֆրանսիայի կառավարող շրջանները Կիլիկիայի անպաշտպան հայերի գլխին, երբ 1920 թ. սկզբներին իրենց զորքերը մտցրեցին այնտեղ։ Չունենալով բավարար ռազմական ուժեր այնտեղ իրենց իշխանությունն ամրապնդելու համար, նրանք հայտարարեցին, թե պատրաստ են հայերին ավտոնոմիա տալ։ Գրգռելով թուրքերին հայերի դեմ, նրանք վերջիններիս թողեցին ինքնապաշտպանության հույսին։ Մինչև ատամները զինված թուրքական զորքերը հարձակման անցնելով, ոչնչացրեցին ավելի քան 20 հազար հայերի։ Կիլիկիայի հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին, գերադասելով մահը թուրքական ստրկությունից։ «Մենք ուզում ենք իմանալ,— ասվում էր ամբողջ աշխարհին ուղղված պաշարված Հաճընի հայերի դիմումում,— դաշնակիցները պատերազմ են մղել փոքր ազգերին փրկելու, թե՞ ոչնչացնելու համար»[10ա]։ Խաբված հայերը կրկին համոզվեցին դաշնակիցների խոստումների կեղծության մեջ։

Ինչ վերաբերում է Անդրկովկասի բուրժուական մարիոնետային կառավարություններին, ապա վերջիններս հլու-հնազանդ գործիք էին իրենց օտարերկրյա տերերի ձեռքին՝ նրանց գաղութային քաղաքականությունն անցկացնելու գործում։ Չնայած դրան, Անտանտի և ԱՄՆ-ի կառավարությունները երկար ժամանակ նրանց պաշտոնապես չէին ճանաչում։ Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին վերաբերող հարցերը լուծվում էին առանց այդ երկրների կառավարությունների կարծիքը հաշվի առնելու, չնայած նրանց ներկայացուցիչները գտնվում էին Փարիզում։

---

10 ՍՄԿԿ կենտկոմին կից ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4033/11։

10ա В. А. Кряжин. Национально-освободительное движение на Ближнем Востоке. М., 1923, էջ 58։

Փարիզում պատահական չէր, որ չէին նկատում այդ ներկայացուցիչներին։ «Չնկատելը» ևս քաղաքականություն է։ Բանն այն է, որ դաշնակիցները իրենց հակասովետական քաղաքականության մեջ դեռևս հույսերը կապում էին սպիտակգվարդիական ուժերի հետ, որոնք ձգտում էին վերականգնել «մեծ ու անբաժան» սպիտակ Ռուսաստանը։ Անդրկովկասյան կառավարությունների ներկայացուցիչներին կոնֆերանս թողնելը կնշանակեր այդ կառավարությունների դեֆակտո ճանաչում, որը հակասում էր սպիտակգվարդիականության շահերին։ Բավական եղավ վերջիններիս ջախջախումը և Անդրկովկասում սովետական իշխանության համար մղվող պայքարի ուժեղացումը, որպեսզի դաշնակիցները 1920 թ. հունվար-ապրիլ ամիսներին մեկը մյուսի հետևից դեֆակտո ճանաչեին այդ կառավարությունները՝ այժմ նրանց Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու հենարան դարձնելու համար։

Այսպիսին էր, ընդհանուր գծերով, դաշնակիցների վարած քաղաքականությունը հայերի և Հայաստանի նկատմամբ։ Այդ քաղաքականության «պսակը» հանդիսացավ Սևրի 1920 թ. օգոստոսին ստորագրած տխրահռչակ պայմանագիրը, որի չգրված հոդվածներն ընկալելու ունակություն հանդես չբերեցին դաշնակցական բախտախնդիրները։ Քաղաքական այն երերուն սիստեմը, որը ստեղծվում էր Հայաստանի շուրջը այդ պայմանագրի հետևանքով, հայ ժողովրդին կանխագուշակում էր միայն ու միայն նոր կոտորածներ ու զրկանքներ։ Դաշնակիցները սուլթանի իշխանազուրկ կառավարության համաձայնությամբ Հայաստանին էին «զիջում» տերիտորիաներ, որոնց նա չէր կարող տեր կանգնել առանց պատերազմի, իսկ պատերազմը քեմալական Թուրքիայի և հյուծված դաշնակցական Հայաստանի միջև հանգեցնելու էր Հայաստանի պարտությանը և Թուրքերի ներխուժմանը Անդրկովկաս, որն իր հերթին պատերազմի պատճառ էր հանդիսանալու Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև։ Այդ մասին է վկայում իրադարձությունների զարգացման հետագա ամբողջ ընթացքը։

Անտանտի իմպերիալիստները, գրգռելով կոնֆլիկտ քեմալականների և Սովետական Ռուսաստանի միջև, նպատակ ունեին վերականգնել իրենց հին ազդեցությունը նոր Թուրքիայի վրա։ Քեմալական նացիոնալիզմը գործարքի մեջ մտավ Անտանտի իմպերիալիզմի հետ։ Եվ երբ Թուրքերի համապարզ դարձավ, որ իրենց հակահայկական ակնկալությունները պաշտպանություն չեն գտնում սովետական կառավարության կողմից, «Թուրքական կառավարությունը,— ինչպես այդ մասին հայտարարեց Գ. Չիչերինը սովետների 8-րդ համագումարում,— որոշեց Գորդյան հանգույցը կտրել սրով»[11]։ Թուրքական զորքերը 1920 թ. աշնանը նորից ներխուժեցին Հայաստան։

Գնահատելով Հայաստանի վրա քեմալականների կատարած արշավանքի քաղաքական նպատակը, Վ. Ի. Լենինը նշել է. «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված. Անտանտը մեզ համար փոս էր փորում և ինքն էլ ընկավ այնտեղ...

---

11 «Документы внешней политики СССР», т. II, М., 1958, էջ 727։

Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ Անտանտին ծախել»[12]։

Այն ուղին, որով հայ ժողովրդին առաջնորդում էին արևմտյան իմպերիալիստները և նրանց կառքին լծված դաշնակցական ջոջերը, չբերեց և չէր կարող բերել նրան ազատություն և անկախություն։ Այդ ուղին հայ ժողովրդի կործանման ուղին էր։

Հայ ժողովրդի ազգային ու սոցիալական վերածննդի ուղին անցնում էր Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ուղիով, ճնշված ժողովուրդների ազատ ինքնորոշման երաշխիքն ապահովող կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության ուղիով։

Վ. Ի. Լենինի գլխավորած Սովետական Ռուսաստանի կառավարության ազգային քաղաքականությունը, որը նոր տիպի փոխհարաբերությունների սկիզբ դրեց ռուսական նախկին կայսրության ժողովուրդների միջև, սկզբունքային նշանակություն ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների մղած ազատագրական պայքարի հետագա ամբողջ ընթացքի համար։ Առանց Սովետական Ռուսաստանի ռազմական, քաղաքական ու դիվանագիտական ամենաակտիվ օգնության, Անդրկովկասի ժողովուրդները չէին կարող հաղթահարել իմպերիալիզմի դիմադրությունը, կզրկվեին ոչ միայն սոցիալիստական ազգային պետականություն ստեղծելու հնարավորությունից, այլև կկորցնեին եղած բուրժուական պետականությունը և Անդրկովկասը կվերածվեր Անտանտի իմպերիալիստների ու թուրքական զավթիչների գաղութի։

Հայաստանի, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը, որն ընթանում էր տեռորի ու հալածանքների մթնոլորտում, բանտերի ու աքսորների սպառնալիքի տակ, ուղղված էր Սովետական Ռուսաստանի հետ երկրամասի աշխատավորների դաշինքի ամրապնդմանը, իմպերիալիզմի գաղութային քաղաքականության և բուրժուանացիոնալիստական կուսակցությունների տիրապետության տապալմանը, Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում սովետական իշխանության հաստատմանը։

Դաշնակցության տիրապետության շրջանում Հայաստանը վեր էր ածվելու ավերակների, վայրենի կամայականությունների, սովի ու աղքատության երկրի, անօթևան և ապրուստի տարրական միջոցներից զուրկ տասնյակ հազարավոր գաղթականների երկրի։ «Հայաստանում գոյությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք»,— գրում էր Ս. Կասյանը 1919 թ.[13]։

Այդ դժոխքից դուրս գալու միակ ելքը երկրում սովետական իշխանության հաստատումը կարող էր լինել, որի համար աշխատավոր զանգվածները 1920 թ. մայիսին կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ զինված ապստամբություն բարձրացրին։ Անհավասար պայքարում զոհվեցին մեր ժողովրդի հարյուրավոր ազնիվ զավակներ, «հասկանալով,— ինչպես գրում էր Վ. Ի. Լենինը այդպիսի հերոսների մասին,— որ իրենք կոչընչանան, բայց կփրկեն սերունդներ, կփրկեն հազար ու հազար բանվորներ ու գյուղացիներ»[14]։

12 В. И. Ленин, ПСС, т. 42, էջ 125։
13 Ս. Ատինյան, «Ո՞ւր է ելքը», հրատ. «Կարմիր աստղ», էջ 1։
14 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 636։

Այդ հերոսների թվում էին մայիսյան ապստամբության կազմակերպիչներն ու ղեկավարները՝ Սարգիս Մուսայելյանը, Ստեփան Ալահվերդյանը, Բաբրատ Ղարիբջանյանը, Հովհաննես Սարուխանյանը, Եգոր Սևյանը, Արշալույս Փանյանը և մյուսները։

Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, բայց հայ աշխատավորների պայքարը սովետական իշխանության համար չդադարեց։ Այդ պայքարում սկզբունքային նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի վերաբերմունքը Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ։ «Սովետական Ռուսաստանի ամբողջ գործունեությունը Կովկասում,— հայտարարել է Գ. Վ. Չիչերինը 1920 թ. հուլիսի 19-ին,— նպատակ ունի բարեկամաբար աջակցել հայ ժողովրդին ճիշտ այնպես, ինչպես նաև նրան սահմանակից ժողովուրդների հանգիստ զարգացմանը»։ Ջախջախելով սպիտակգվարդիական բանդաներին Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի աշխատավորներին՝ ներքին և արտաքին հակահեղափոխության ուժերի ջախջախման գործում։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը և Ժողկոմխորհուրդը ողջունեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ինքնուրույն կոմունիստական կուսակցությունների ստեղծումը և Անդրկովկասում անկախ սովետական հանրապետություններ ստեղծելու լոզունգը, որը խիստ կարևոր նշանակություն ունեցավ ազգայնական հակահեղափոխության ոտքի տակից հողը խլելու և բուրժուական հանրապետություններին սովետական անկախ հանրապետություններ ստեղծելու գաղափարը հակադրելու գործում։

Սովետական Ռուսաստանը անգնահատելի դեր է կատարել Հայաստանի նկատմամբ քեմալական Թուրքիայի ագրեսիվ քաղաքականության ձախողման գործում։ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջին իսկ օրերից սովետական կառավարությունը, չնայած դաշնակցական կառավարության թշնամական դիրքին, անշահախնդիր կերպով պաշտպանում էր հայ ժողովրդի շահերը։ Մուստաֆա Քեմալին 1920 թ. հունիսի 3-ին հասցեագրած նամակում Գ. Վ. Չիչերինը հույս էր հայտնում, որ «դիվանագիտական բանակցությունները թույլ կտան Ազգային մեծ ժողովին հաստատել մի կողմից Թուրքիայի և, մյուս կողմից՝ Հայաստանի և Պարսկաստանի միջև ճիշտ սահմաններ, որոնք պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»[15]։ Սովետական կառավարությունը մասնավորապես առաջ էր քաշում էթնոգրաֆիական սահմանների սկզբունքը, որը գոյություն ուներ մինչև համաշխարհային պատերազմը, այսինքն կրկին պնդում էր «Թուրքահայաստանի» մասին դեկրետի պահանջների վրա։ Եվ եթե Սովետական Ռուսաստանը չկարողացավ հասնել այդ հարցի մինչև վերջ դրական լուծմանը, դրա մեղքն ամբողջությամբ կիսում են արևմտյան իմպերիալիստական կառավարությունները, Թուրքիան և, ոչ պակաս չափով, դաշնակցական կառավարությունը։

Սովետական Ռուսաստանը ձգտում էր նորմալ հարաբերություններ ստեղծել դաշնակցական կառավարության հետ։ «Հայաստանի հետ հարաբերությունների ոչ մի խզում և ռազմական բարդություն չի թույլատրը-

15 «Документы внешней политики СССР», т. II, էջ 555։

վում,— ասվում էր Հայաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչության անդամ Սահակ Տեր-Գաբրիելյանին 1920 թ. օգոստոսի վերջերին հասցեագրված Գ. Վ. Չիչերինի նամակում։ — Դա կառավարության տեսակետն է, որը ամուր և վճռական կերպով պաշտպանվում է կուսակցության Կենտկոմի կողմից»։

Սովետական Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը պաշտպանություն չգտավ դաշնակցական կառավարության կողմից։ Ավելին, հայ ժողովրդի համար օրհասական այդ օրերին դաշնակցականները ձեռք մեկնեցին երկիրն ավերող թուրք օկուպանտներին։ Դաշնակցականներն իրենց պաշտոնաթերթի՝ «Հառաջի» բերանով կոչ էին անում, թե «եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և երկար ժամանակ ապահովել իր պետական ու քաղաքական գոյությունը, ապա նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»[16]։

Դաշնակցականները, որոնք իրենց հանդես գալու առաջին օրերից թուրքահայ դատը դարձրել էին դրոշ՝ իրենց ազդեցությունը հայ ժողովրդի վրա հաստատելու համար, այժմ նետվում էին թուրքերի գիրկը՝ երկիրը ծախելու գնով իշխանության գլուխ մնալու համար։ «Հառաջի» այս հայտարարությունը և 1920 թ. դեկտեմբերի 2-ին թուրքերի հետ կնքած Ալեքսանդրապոլի դաշնագիրն անհերքելի կերպով վկայում են այս իրողությունը։

Բայց Հայաստանի իսկական տերը՝ բանվորներն ու գյուղացիները այլ կերպ որոշեցին երկրի բախտը։ Վերջնականապես երես դարձնելով դաշնակցականներից, նրանք Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կրկին ապստամբության դրոշ բարձրացրեցին և տապալելով դաշնակցականների կառավարությունը՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին երկրում հաստատեցին սովետական իշխանություն։ Երկրի ներքին հակահեղափոխական և արտաքին իմպերիալիստական ուժերի դիմադրությունը հաղթահարելու համար նրանք օգնություն խնդրեցին Սովետական Ռուսաստանից։ 11-րդ կարմիր բանտկի հերոսական զինվորների մուտքը Հայաստան ամրապնդեց նոյեմբերյան հեղափոխության նվաճումները։ Վ. Ի. Լենինը Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանին հղած հեռագրում ջերմորեն ողջունեց իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Հայաստանը։ Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ նոյեմբերի 29-ը շրջադարձային մոմենտ հանդիսացավ, որով սկիզբ դրվեց նրա իսկական պատմությանը, երբ իշխանությունն անցավ այդ պատմության կերտողների ձեռքը։

Սովետական իշխանության հաստատումով, սակայն, հայ ժողովուրդը դեռևս չէր ազատագրվում իրեն սպառնացող թուրքական ագրեսիայի վտանգից։ Ահա թե ինչ էր գրում այդ մասին Վ. Ի. Լենինը Գ. Վ. Չիչերինին 1920 թ. դեկտեմբերի 13-ին. «Ընկ. Չիչերին. երեկ ինձ մոտ էր Տեր-Գաբրիելյանը, որը նույնպես խոսում էր ջարդի ահավոր վտանգի մասին... կարծում եմ անհրաժեշտ է... ամեն կերպ օգնել» Հայաստանին[17]։ Վ. Ի. Լենինը հանձնարարել էր Չիչերինին տեղեկանք պատրաստել հայերին սպառնացող ջարդի և հայ գաղթականների վիճակի մասին։

---

16 «Հառաջ», 20 հոկտեմբերի 1920։

17 В. И. Ленин, ПСС, т. 52, էջ 33։

Միության արխիվներից մեկում մեզ հաջողվեց գտնել Չիչերինի պատասխանն այդ նամակին։ Ահա թե ինչ է գրում նա Վ. Ի. Լենինին դեկտեմբերի 14-ին. «Այնքանով, որքանով խոսքը վերաբերում է հայ բնակչությանն ընդհանրապես, ապա մեր ամբողջ գործունեությունն այդ ուղղությամբ, ինչպես Ձեզ հայտնի է, նպատակ ունի կանգնեցնել թուրքերի հետագա հարձակումը և ստիպել նրանց ետ քաշվել Արփաչայի այն կողմը... Դուք գիտեք, որ թուրքերին զենք տալը մենք կապել ենք թուրքերի՝ Արփաչայի այն կողմը նահանջելու պահանջի հետ։ Մենք կարող էինք անել ավելին, եթե հնարավոր լիներ Հայաստան ուղարկել ավելի շատ զորք»[10]։

Թուրքերի հետ Ալեքսանդրապոլում դաշնակցականների կնքած պայմանագիրը մեծ բարդություններ ստեղծեց սովետա-թուրքական հարաբերություններում։ «Այդ պայմանագիրը,— ինչպես նշել է Գ. Վ. Չիչերինը,— չճանաչվեց ո՛չ Սովետական Հայաստանի, ո՛չ էլ Միութենական Ռուսական հանրապետության կողմից, և նրա չեղյալ հայտարարելը դարձավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հետագա բանակցությունների գլխավոր առարկաներից մեկը»[19]։

Ինչ վերաբերում է 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրով Հայաստանի տերիտորիալ հարցերի լուծմանը, ապա հարկ է հիշել, որ այդ հարցերը լուծվում էին դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի շրջանում, երբ Երևանը գտնվում էր նրանց ձեռքում և երբ նրանք հայտարարել էին Թուրքիային, որ համաձայն են կիրառման մեջ դնել Ալեքսանդրապոլի տխրահռչակ պայմանագիրը։ Այդ նշանակում էր, որ դաշնակցականները թուրքերին էին զիջում Ալեքսանդրապոլը և էլի շատ այլ տերիտորիաներ և համաձայն էին երկիրը սահմանափակել ինչ-որ 10 հազ. քառ. կմ տարածությամբ, միայն թե թուրքերի օգնությամբ մնային իշխանության գլուխ։ Այսպես կոչված «Հայրենիքի փրկության» կառավարությունը հայրենիքի վերջնական կործանման քաղաքականություն էր վարում։

Եվ եթե թուրքերը, այնուամենայնիվ, ստիպված եղան ետ քաշվել Արփաչայի այն կողմը, դրա համար հայ ժողովուրդը պարտական է իր դարավոր բարեկամին՝ ռուս մեծ ժողովրդին։ Երբեք չպետք է մոռանալ Ալ. Մյասնիկյանի վկայությունն այն մասին, որ մենք «տաճիկների հետ ավելի հաջող պայմաններ կարող էինք կապել։ Բայց չարագործները խանգարեցին։ Եթե չլիներ դաշնակների վերջին ավանտյուրան, մենք այժմ ավելի լայն սահմաններ կունենայինք»[20]։ Զրպարտություն և չարագործություն են դաշնակցական գրչակների հակառակ պնդումները, որոնց, դժբախտաբար, մոլորվածները տուրք են տալիս։

Բայց նույնիսկ 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի կնքումից հետո էլ, որն ըստ էության չեղյալ էր հայտարարել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, քեմալականները ոչ միայն իրենց զորքերը դուրս չէին բերում օկուպացված տերիտորիաներից, այլև ձգտում էին նվաճել ամբողջ Սովետական Հայաստանը։ Քեմալականները կհասնեին իրենց նպատակին, եթե Սովետական

---

18 Գ. Գալոյան, Հանուն պատմական ճշմարտության («Լենինյան ուղիով», 1967, № 7, էջ 76)։

19 Г. В. Чичерин, Статьи и речи, М., 1961, էջ 196։

20 Ալեքսանդր Մյասնիկյան. Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 336։

Ռուսաստանը պատվար չկանգներ հայ ժողովրդին։ Երբ Սովետական Ռուսաստանին հայտնի դարձավ, որ քեմալականները հրաժարվում են իրենց զորքերը ետ քաշել Սովետական Հայաստանի օկուպացված տերիտորիաներից, ժողկոմխորհուրդը ազդու միջոցների դիմեց՝ ստիպելու Թուրքերին հարգելու մարտի 16-ի պայմանագիրը։ Ահա թե ինչ է ասվում այդ առթիվ Գ. Վ. Չիչերինի՝ Գ. Կ. Օրջոնիկիձեին 1921 թ. ապրիլի 8-ին հղած հեռագրում. «Մեր անունից կտրուկ բողոք հայտնեցեք Կարաբեքիր փաշայի այն հայտարարության դեմ, թե նա չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և Ազգային մեծ ժողովի կառավարությանը հաղորդեցեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ Թուրքական զորքերն անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմաններից այն կողմ։ Մատնանշեցեք այն բանը, թե ինչ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ Թուրքական զորքերի ընդհարումը կարմիրբանակային զորամասերի հետ...»[21]։

Թուրքիայի կառավարությանն ուղղված բազմաթիվ նոտաներում և հուշագրերում ՌՍՖՍՀ Ժողկոմխորհուրդն ընդգծում էր, որ Սովետական Հայաստանը Սովետական Ռուսաստանի անբաժան մասն է, որի նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգություն դիտվում է որպես ոտնձգություն Սովետական Ռուսաստանի դեմ, որ պատերազմը Սովետական Հայաստանի դեմ նշանակում է պատերազմ Սովետական Ռուսաստանի դեմ, որ եթե Թուրքական զորքերը ետ չքաշվեն Արփաչայի այն կողմը, կարմիր բանակը ստիպված կլինի զենքով ստիպել նրանց այդ անել։

Միայն Սովետական Ռուսաստանի ճնշման տակ Քեմալի կառավարությունը ստիպված եղավ վերանայելու իր քաղաքական կուրսը Սովետական Հայաստանի նկատմամբ։ Եթե չլիներ Սովետական Ռուսաստանի ռազմական, քաղաքական ու դիվանագիտական օգնությունը, չլիներ Վ. Ի. Լենինի մեծ հոգատարությունը հայ ժողովրդի նկատմամբ, չէր լինի նաև այսօրվա Սովետական Հայաստանը։ Միայն մեծ Հոկտեմբերի ուղին, միայն սովետական իշխանությունը հայ ժողովրդին բերեց ազատություն, ազգային ու սոցիալական վերածննդի հնարավորություն։

Անցած 60 տարիները դրա լավագույն ապացույցն են։ Սովետական իշխանության հաստատումը գլխավոր նախապայման հանդիսացավ ազգային ճնշման վերացման, սոցիալական առաջընթացի, ինչպես նաև հայ ժողովրդի սոցիալիստական պետականության ստեղծման, ամրապնդման ու զարգացման համար։ Միջազգային իմպերիալիզմը, օգտագործելով ազգայնական էմիգրանտական ուժերը և Թուրքիայի ագրեսիվ նկրտումները, նույնիսկ ամբողջ Անդրկովկասում սովետական իշխանություն հաստատվելուց հետո էլ սին հույսեր էր փայփայում՝ երկրամասը Սովետական Ռուսաստանից անջատելու ուղղությամբ։ Այդ պատճառով էլ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի սովետական հանրապետությունների քաղաքական, տնտեսական ու ռազմական դաշինքը Սովետական Ռուսաստանի հետ և ապա ՍՍՀՄ-ի կազմավորումը կենսական նշանակություն ունեցան սովետական բոլոր ժողովուրդների համար։

Գտնվելով ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում, հայ ժողովուրդն անխոցելի դարձավ իր դարավոր հակառակորդների համար և

---

21 «Документы внешней политики СССР», т. III, М., 1959, էջ 55։

ձեռնամուխ եղավ բգկտված ու խոշտանգված իր հայրենիքի վերաշինությանը։ Նախկինում տնտեսապես հետամնաց ազգերի առավել զարգացման՝ կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը շատ կարճ ժամանակահատվածում պերականգնեց պատերազմի և դաշնակցականների տիրապետության հետևանքով բայքայված ժողովրդական տնտեսությունը, արդյունաբերության արտադրանքի մակարդակը 1928 թ. հասցնելով 1913 թ. մակարդակին։ Նախապատերազմյան երկու հնգամյակների ընթացքում այն արդեն 9, ոսկ 1970 թ. 184 անգամ գերազանցում էր այդ մակարդակը։ Դա թռիչք էր դարավոր հետամնացությունից դեպի սոցիալական առաջադիմության բարձունքները։ Հայաստանը վերածվեց բարձր զարգացած ինդուստրիալ և կոլեկտիվ գյուղատնտեսության երկրի՝ իր առաջավոր սոցիալիստական մշակույթով։

Ժամանակակից Հայաստանի արդյունաբերությունը ներկայացնում է գունավոր մետալուրգիայի, քիմիական, մեքենաշինական, շինանյութերի, սննդի, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի բարդ կոմպլեքս՝ իր հզոր էներգետիկ բազայով։ Սովետական Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 150 տեսակներ (հաստոցներ, մամլիչ մեքենաներ, ճշգրիտ գործիքներ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, ժամացույցներ և այլն) արտահանվում են աշխարհի ավելի քան 70 երկրներ։

Անճանաչելի է դարձել գյուղը, որն իր զարգացման մակարդակով աստիճանաբար մոտենում է քաղաքին։ Հանրապետությունը պատվել է բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ու ընդհանուր հանրակրթական դպրոցների խիտ ցանցով։ Սովետական Հայաստանի յուրաքանչյուր երրորդ քաղաքացին սովորում է։

Հայաստանը զարգացած գիտության ու մշակույթի երկիր է։ Գիտահետազոտական հիմնարկների թիվն անցնում է 100-ից, որոնց աշխատանքները կոորդինացվում են համաշխարհային ճանաչում գտած ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից։ Հայաստանի գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, ճարտարապետների, կինեմատոգրաֆիստների և այլ միություններ իրենց շուրջն են համախմբել ստեղծագործական ինտելիգենցիային, որոնց գործերը վկայում են մեր հոգևոր մշակույթի բարձր աստիճանը։

Այն ամենը, ինչ ձեռք է բերել հայ ժողովուրդը սովետական իշխանության 60 տարիների ընթացքում, վկայում է սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսահաստատության մասին, հայ ժողովրդի ազգային ու սոցիալական վերածնունդը մասին։

ВОЗРОЖДЕНИЕ ОСВОБОЖДЕННОГО НАРОДА

Член-корр. АН АрмССР Г. А. ГАЛОЯН

(Резюме)

29 ноября 1920 года явилось важнейшим событием, поворотным пунктом в многовековой истории армянского народа, определившим путь его социального и национального возрождения. Присоединение Восточной Армении к России в первом тридцатилетии XIX века освободило армянский народ от векового гнета восточных поработителей и со-

здало возможность более быстрого его экономического, политического и социального развития. Но армянский народ продолжал оставаться под социальным и национальным гнетом царизма.

В эпоху империализма и пролетарских революций национально-освободительное движение армянского, как и других угнетенных народов, поднималось в связи с рабочим движением. Но национально-освободительное движение армянского народа имело свои особенности: оно тысячами нитей было связано с национально-освободительной борьбой западных армян. Это обстоятельство создало известные трудности в определении возможных путей победы этого движения.

В статье рассматриваются диметрально противоположные позиции по этому вопросу со стороны буржуазных националистов и социал-демократов—большевиков.

После победы Великой Октябрьской социалистической революции национально-освободительное движение армянского народа приняло социалистический характер, слилось с общенародной борьбой за Советскую власть и завершилось победой Советской власти в Армении.

С помощью Советской России армянский народ впервые в своей истории создал социалистическое государство и в результате неуклонного претворения в жизнь ленинской национальной политики достиг своего национального и социального возрождения.